

## Արարատի մարզպետ Արամայիս Գրիգորյանի շնորհավորական ուղերձը Բուժաշխատողի օրվա կապակցությամբ

20.06.2017



Առողջապահության ոլորտի հարգելի աշխատակիցներ,

Սրտանց շնորհավորում եմ բոլորիդ մասնագիտական տոնի՝ Բուժաշխատողի օրվա կապակցությամբ:

Տոնական այս օրը լրացուցիչ առիթ է շնորհակալություն հայտնելու համար մեր բոլոր այն բժիշկներին, բուժքույրերին ու բուժաշխատողներին, ովքեր, բարձր պահելով մասնագիտության պատիվը, անմնացորդ նվիրումով ու սիրով են կատարում իրենց առաքելությունը:

Հիպոկրատի երդմանը հավատարիմ, դուք անում եք առավելագույնը մարդկային կյանքեր փրկելու և առողջությունը վերականգնելու համար:

Սիրելի՛ բժիշկներ, բուժքույրեր, բուժաշխատողներ, ևս մեկ անգամ շնորհավորելով մասնագիտական տոնի կապակցությամբ, ձեզ ու ձեր ընտանիքներին մաղթում եմ քաջառողջություն, բարեկեցություն ու երջանկություն:

Արարատի մարզպետ՝

Արամայիս Գրիգորյան